

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐԱՍՊԵԼՆԵՐԸ  
Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵջ

(ՔՆԱՐԴԱՌԱՏԻՒԹԻՒՆ և ՌԱՍՈՒԱԾՔ)

(Եարունակութիւն) \*

Բ.

ՏԻԳՐԱՆԻ ԱՌԱՍՈՒԵԼԸ

Հակասական կարծիքներ:—Ծիգրանի ու Աժդահակի և Հերոդոտի մէջ պատմուած կիւրոսի և Աժդահակի առասպելների նմանութիւնն աշքի ընկնօղ է: Էմինի կարծիքով կիւրոսի և Աժդահակի աւանդութեան մի հայ ժողովրդական պատմուածքն է այդ, որ պահէլ են հայ երգիչները: Պ. Խալալթեանն, անշուշտ, Խորենացու սարբածն է, համարում Ծիգրանի առասպելը, — «Հերոդոտի պատմածի ձևով շինած մի արուեստական պատմուածք»: Բայց նորա փաստերը համոզելի չեն<sup>2</sup>: Իսկ պ. Դարագաշեանը (Քնն. Պատմ. Ա. եր 194 հան.) հակասական կարծիքների մէջ է մըտնում: Նա զրում է. «Հեղինակ Մարիբասեան պատմութեան զԾիգրանայ և զԱժդահակայ, տեսնելով առ Քսենեփոնի Ծիգրան զոմն հայ, բարեկամ կիւրոսի և զործակից ի պատերազմունս նորա, Հերոդոտոսի մէջ ևս կարդալով Աժդահակայ երազը, և հրամանաւ նորա ի զործ զրուած միջոցներն ի կորուսունել զիւրոս, յորմէ որպէս թէ կը կասկածէր Աժդահակ (Հերոդ. Դպր. Ա. 127), զիւրոսէ պատմուած առասպելը կը դարձունէ, Ծիգրանայ վրայ»: Սակայն անմիջապէս (եր. 196) աւելացնում է. «բայց Ծիգրանայ և Աժդահակայ կոխը կ'ակնարկէ, ուրիշ հին առասպել մը. այն է Թրիգոյի և Աժի-տահակայ

\* Տես Արտաւ 1900 թ. համար Ժ. եր. 484:

1. Խալամ. Արմ. Թոօօ, եր. 178. Էմինն այս կարծիքը յայտնի է իւր Մամինսկու ու ծրագրութեան Արմենիա, 1881. աշխատութեան մէջ, որ մասն մնուի տակ լուսնին:

2. Նորա փաստեմ եմ՝ 1, որ նա «մեզ համոզել է արդեմ, որ հայոց վկար դոյուրիւն յէ ունեցել». 2, երկու պատմուածին «նմանարիներ». 3. Հայոց առասպելի պատմուածը ժողովրդական վիպական ուժին: այլ բաղմակառակն հաղած է «զանազան աղիւրելիք», զանազան ցրելիք:— Բայց մինչ զիւնելք րե ինչու և հետազոտում պ. Խալարեանն այդ աղիւրելիք:

առասպելը (զորմէ տես վերագոյն էջ 51), զոր թերեւ հին հայ երգիչք առած էին ի Զինատաւեսաւայ: Իսկ իւր կոչումն արած տեղում պ. Դարագաշեանը զարմանալի չէ համարում: որ հնդկական առասպելն ինչպէս պարսից մէջ կար այդպէս և հայոց մէջ լինէր:

Ո՞րն է այս հակասական կարծիքներից ընդունելին: Ժողովրդական են այդ երգերը, կամ ձիշան ասած, ժողովրդական երգերի վրայ և հիմնուած այդ պատմութիւնը, թէ շինծու «կամամտածական» բան է:

Եինծու կերեին, եթէ այդ երգերն իրաք լինէին կիւրոսի ժամանակակից Ծիգրանի մասին, ինչպէս գնում է, Խորենացին: Բայց Խորենացու սիսալը, որ կարող է իւր աղրիւրից է առաջացել, դժբախտաբար մոլորեցրել է և մեր քննադրաներին: Ծիգրանի մասին երգերն ու զովիստներն եղել են Մեծն Ծիգրանի մասին, և Խորենացին (թերեւ Խորենացու աղրիւրը) ինչպէս սրամառութեամբ նկատում է պ. Դելցեր, «թիւր գիտնականութեամբ՝ կիւրոսի ժամանակակից՝ Քսենեփոնի վիպասանութեան մէջ զործող Ծիգրանին վերագրեց զայն, մինչդեռ երգերը բնականաբար շուկուզոսի ժամանակակիցը կը դովարանէին»:

Անշուշտ, բուն երգերը չէ բերում Խորենացին և շատ բան իրենից, իւր կամ իւր աղրիւրի լեզուով է պատմում, բայց ամենայն ինչ որ նա ասում է, իսկապէս Մեծն Ծիգրանին է վերաբերում: Փորձենք քննել, և մենք կը տեսնենք, որ երգերը ժողովրդական են:

Մեծն Ծիգրան եւ երգեր նորա մասին:— Պ. Դարագաշեան<sup>2</sup> խօսելով Մեծն Ծիգրանի մասին՝ զրում է. «Թիրաւի է կոչել մեծին Ծիգրանայ ժամանակն, աննման փառաւորութեան հետ, թէպէտ և կարծ՝ հայ աղգի մը անձնաւորութեան ժամանակ, այնպէս որ, ըստ մեզ, ի Ծիգրանայ և այսր պէտք է խնդրել հայ աղգ, ի Ծիգրանայ և անդր հայը սազմին է անկերպարան, առ Ծիգրանաւ կը ծընեանի, կը հասնի ի չափ, կը ծերանայ միան-

1. Հ. Գլցեր, Համառ պատմ. Հայոց, բարգ. Գր. վ. Գայումիսարեան, Վիկննա, 1897, եր. 8:  
2. Քնն. Պատմ. Հայոց, թ. եր. 129:

գտնայն։ Զարմանալի երեսից, Բայց ըստ մեզ՝ այն է մանաւանդ զարմանալի, որ մեր տոհմային աւանդութիւնն այս անձին ժամանակէն և պատմութենէն, բայց զոր համառօտութենէ՝ ոչ այլ ինչ պահած է, բայց ՄԵԾ անունը ինչ որ եղանք և ենք՝ եղանք և ենք Տիգրանաւ։ Այս գնահատութիւնը վերջի շափազանցութիւնը թողած, մեծ մասամբ ծիշա կարելի է համարել։ Միայն ազգը Տիգրանի օրով միանգամից պատրաստէ ծընում։ Նորանից առաջ արդէն ազգը անկերպարան սաղմութեան վիճակից դուրս գալ է սկսել, և կարելի չէ ասել թէ ազգային աւանդութիւնը չէ պահած Տիգրանի ժամանակի «աննման փառաւորութեան», «Հայ ազգի անձնաւորութեան» յիշատակը։

Այդպիսի ժամանակը որ իրօք դիւցազնական էր Հայ ազգի համար, «քսան և հինգ ամք... անխառն յաջողութեան», երբ «հաւատային սուտակասպաք թէ ոգի իմ իցե» Տիգրան, չէր կարող իւր խորին ապաւորութիւնը չանել Հայ ժողովրդի երեակայութեան վրայի եւ մի ժողովուրդ, որ զիտէր երդել իւր թագաւորութեան հիմնադրի՝ Արտաշէս թագաւորի Արտաշատ մայրաքաղաքի հիմնարկութիւնը, զիտէր և նոյն Տիգրանի թոռան պատմութիւնից մի վեպ ստեղծել, չէր կարող չերգել այդ թագաւորական ցեղի ամենից փառաւորին, արքայից արքայ ՄԵծն Տիգրանին։ Բայց պ. Գարագաչեանը, զմրախտարար, զիխի չէ ընկնում, որ Տիգրանի անունով մնացած երգիրը ՄԵծն Տիգրանին են զովարանում։ Թէ, չէ նա անտեղութիւններով լի չէր համարիլ Խորենացու (Խոկապէս իւր ազրիւրի) այդ երգերից քաղած պատմութիւնը։ Արդարի, եթէ Քսենեփոնի յիշած Տիգրանի վրայ համարենք այդ երդերը՝ անտեղութիւններունին իրենց մէջ, Բայց մի անդամ եթէ ՄԵծն Տիգրանի վրայ ենք մտածում, ոչ միայն բոլոր անտեղութիւնները վերանում են, բայց հարկաւ Խորենացու կամ իւր ազրիւրի մացրածից, այլ և տեսնում ենք թէ որ աստիճանի հիացել ու փառաւորել է ժողովուրդն իւր սիրելի թագաւորին։

Եւ ժողովրդի այդ սքանչացումն ու ողեւրութիւնն է անցնում երդերից մեր ծե-

րունի պատմագրի պատմութեանը, որ յափշտակուած ու երիտասարդացած զրում է։ «Զի ո՞ք ի ծշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կացցէ, սորա յիշատակօքն ոչ զուարձացի, և յորդորիցի այսպիսի այլ լինելու ՄԵծն Տիգրանն է եղել այդ մարդը, որ ամեննեցուն թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամեննեցուն քաջ» բամենեցունց՝ որ առ իւրօքն էին ժամանակօք՝ նախանձելի, և յեանցս ըղձալի ինքն և ժամանակ իւրաւ ժողովրդի իդէալացած բաղձանքն է այդ՝ յետադայ քաղաքական աղէանների միջոցին մի բաղձանք, որ թերեւս իւր ազրիւրից, անցնում է Խորենացուն և նա ցանկանում է։ «Եւ սիրելի էր ինձ յայնժամ զալ Փրկչին և զիս զնել և առ նոքօք յաշխալից զմուտն իմ լինել և նոցա տեսութեամբն խրախճանալ, և յարգեացս վասնպից ապրիլ։ Այլ վաղ ուրեմն փախեաւ ի մէնջ պատահումն այն, թէ արդիւք և վիճակ» (Ա. իբր.)։ Մի խօսք, որ ասած է մեր պատմագրիը ոչ թէ այդ զիսի մէջ եղած լոկ անունների ցանկի համար այլ միայն Տիգրանի համար, որ իններորդ ի նախնեաց մերոց պատկաւորաց էր Հումկուանունի և յաղթողս ընդ այլ աշխարհակալաւ։

Ասել թէ մի պատմագրի ինքը շինծութագաւոր կըսաեղծեր իւրենից և ապա այնպիսի կրօնական ու հայրենասիրական անկելք զգացմունքով կոռեպուէր այդ թագաւորով։ — այդ մեզ անհասկանալի է։

Բայց մենք տեսնենք պ. Գարագաչեանի նկատած անտեղութիւններ։<sup>2</sup>

1. «Խորենացին կոմելով մեծ քան զամանակ՝ աշխարհակալ թագաւորս ցուցանել զՏիգրան՝ կատարել կուտայ նմա այնպիսի գործ մը, զոր պարսկական պետութեան հըզօրադոյն ժամանակն անդամ չկրցան վճարել

1. Տպագրի մէջ վերեւում դրած հատուածի շարունակուրինն աղմատուած է։ Ա. ձեռադրեներ ունին բայց արդ և առ օտարաց բագաւորութեամբն կացեալ, ընդ նոցայն զմերս ազգի վեցրդ բագաւորաց։ Զիւրոյ աշխարհին բնիկ պատկաներ արց այնովին։

2. Գարագաչեան, Քնն. Պատմ. Ա. եր. 189 հէն.

Դարեցի և Քսելքսի պէս թագաւորք, այն է նուածել զՅոյնս»... «Ո՞ր յոյները՝ հարցնում է այնուշետե պ. Գարագաշեան, Եղագացի և Պեղապանէո՞ն, թէ յունական բաղթականութեանց, որ Փօքուն Ասիօյ արևմբառեան եղերքն էին, կամ թերեւս Արքիպեղագոսի կղզեաց»:

Խորենացին մեզ չէ ասում թէ ո՞ր յոյները, այլ թէ Տիգրանը ոչ սակաւ ժամանակ յոյներին էլ իւր ձեռին նուածելով՝ հնազանդեցնում էր: Այսպան միայն: Արդ եթէ բանանք պ. Գարագաշեանի պատմութեան երկրորդ մասը (եր. 130—153), ուր Թէոդոր Ռեյնաքի (Theodor Reinach) «Միջրգաս Եւպատոր» զբքից բերում է Մեծն Տիգրանի պատմութեան համար մի ամբողջ հատուած, կը գտնենք այնտեղ, որ քանի անգամ Տիգրանի զօրքերն անցնում են Կապագովկիա: Նա տիրում է Ասորիքին, կործանելով Սելեկեան պետութիւնը, ախրում է գաշտային Կիլիկիային: «Անտիոք, մին յարգայանիսա քաղաքաց Տիգրանայ՝ հարկանէր գահէկան ի պատկեր նորաւ և միում ի զօրքափարաց նորա Մաղագատեայ յանձնէր վարել զԱսորիս իրք սատրապ (Ապաւ. Ասոր. 48)... Յարեմուս արկ նա ձեռն ի վերջին ծաղիկ պսակին Սելեկեանց, ի գաշտային Կիլիկիա: Բազում քաղաքաց ծաղկելոց ընակիչք խախտեալ ածան ի Հայս (Դիմն Կաս. ԼԶ. 37, Պոււտ. Պումպ. 28): Դարձեալ... Հայք մտին երրորդ անդամ ի Կապագովկիա: Կալան զԱրիորարգան իրք ի վարմի և տիրեցին մայրաքաղաքին, ընակիչք Մաժաքայ, որպէս եւ այլոց մետասն քաղաքաց Յունաց, ընդ բնաւ իրք բիւրեք երեսուն (300,000) ածան առնել չէն զնոր նիստ արքայից արքայից ահաւորին Տիգրանայ, 77 ն. ք. դՔԲ. (Ապահիան, Միջր. 6, 7; Սար. ԺԱ. 14, 15, ԺԲ. 2, 9): — Կարգանք շարունակութիւնը. «Հելլենականութիւնն էր յուժի յաշխարհն այն ինչ նուածեալս, որպէս ի Կիլիկիա, յԱսորիս, ի Միջդոնիա (Միջագեաք հիւսիսոյ), որ առաւել քան կիսով չափ էին յունացեալք ընդ իշխանութեամբ Սելեկեանց»:

Աչա ո՞ր յոյներին է նուածում Տիգրանը: Դոքա Սելեկեան պետութեան և Կապագով-

կիսոյի յայներն են: Եւ որքան ծշտութեամբ արտայայտուած պահուած է Մեծն Տիգրանի կարծատե աիրապետութիւնը յոյների վերաց: «Եւ զյոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեւ նուածեալ հնազանդէր»:

2. «Խորենացին պատմութեան այս մսուին մէջ ես կը գտնենք երեւելի հակատութիւն մը: Խորենացին յետ գնելոյ զՊարոյր առաջին թագաւոր և նովու սարձեալ զօտար լուծն ի պարանոցէն Հայոց՝ առ Տիգրանաւ, զօր իններորդ կը զնէ ի Պարուրէ՝ զՀայու առակաւին ընդ օտար լծով կ'ենթադրէ: քանիզ առսէ. Սա (Տիգրան) զմեզ որ ընդ լծով էինք՝ արար լծազիր և հարկապահանջնչ»:

Նախ Խորենացին ոչ մի տեղ չէ ասած թէ Պարոյրի ձեռով «օտար լուծն բարձեալ է ի պարանոցէն Հայոց»: Նա Պարոյրին զնում է այն իշխանների կարգում, իրք վիրջին, որոնք ասորեսատանցոց թագաւորութեան օրով իշխում էին Հայտատանում: և Պարոյրը «ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ զատեի Վարդակայ Մարի բառնալով զթագաւորութիւնն ի Մարդանապալայ» (Ա. իա) <sup>1:</sup>: Պարոյր իշխանն ուրեմն միայն օգնում

1. Այս բնրեցուածք միշտ է եւ համեմատ վեճագին: «Օգնական վիճի (Պարոյր) Վարդակայ Մարի՝ բառեալով զրագաւորութիւնն ի Մարդանապալայ»: Այդ միշտ բնրեցուածք ունին №№ 1665, 616 Ա. ձեռագիրները: միւսներն էլ ունին Մարի: Խակ բա Տպագրի. «Եւ փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի Պարոյր և արքակայ Մարկ, բառեալով զրագաւորութիւնն ի Մարդանապալայ»: Պարոյրական կայսեր կայսեր ի Վարդակական կ սիրել Ասորեսանին եւ նիւսուկին: Այս սիալ բնրեցուածքից խօսի որ մը փոքր ներեւուն նորենացին պատմում է քէ Վարդակական կ սիրել Ասորեսանին եւ նիւսուկին: Այս սիալ բնրեցուածքից այսպիսի սիալ հերակացութիւն է առնել շնորհ. Միարանը (Խոր. Պ. Աւա. եր. 50): «Սա (Պարոյր) ու փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի Վարդակայ Մարկ»— հարկաւ, ընդ ու կայսեր ու դուռի եւ խլում է ի շշիւան և նուուրի իւնք: Բայց ուր մնաց խօսի շարունակութիւնը բառալով զրագաւորութիւնն ի Մարդանապալայ»: ուր մնաց եւ մնաց խօսիր. «Ցինքն եւ զաքէ մեր նախարար յանդուցանք զՊարոյր... եւ այսուկ զրագաւորութիւնն ի Մարդանապալայ յինքն սիրեկ (Վարդակական կ ոյ Պարոյր) ասորեսանի եւ նիւսուկին: Ուր մնաց եւ զիսի վեճագիրը: եւ այս սիալ կը բակացութիւնն առնել է շնորհ. Միարան, որպէս զի կարողանայ միմին իւր նորենացին Պարոյրից առաջ եղած իշխաններն ըմիկ յի համարութիւն: Այս մասին յիսոյ եւս խօսի կը իւր նորենացին Պարոյրից առաջ եղած իշխանների:

է վարբակեսին, և սա այդ օդնութեան համար «մագաւորութեան ձեւ և շուք է խոստանում նորան»: Արքայից արքայութիւնն անցնում է Մարտ, և եթէ հայ իշխաններն այնուհետեւ թագաւորը անունն են կրում, այդ չեւ նշանակում, որ նոքա ազատուած էին արքայից արքաների օտար լծից: Նոյն դիմուի վերջում հենց այդ հայ իշխաններին ու թագաւորներին գնում է «իրեւ գործակալք և վերակացուք աշխարհիս ի նոցանէ (արքայից արքաներից) կացելոց, և մեծ կողմանակալք»: Իսկ յաջորդ (հԲ.) դիմուի սկզբում այդ «մագաւորութեան աստիճան» ունեցողներին այսպէս է կոչում: «...ի թիւ մելոց արանց, մանաւանդ թագաւորաց»: Եւ ինքը պ. Գարագաշեանն էլ զրում է (Ա. եր. 186): «Ի բանից ասաի Խորենացւոյն կը հետաեի... թէ ի Խորենացւոյն այնպէս ցնծութեամբ թագաւոր կոչուած Պարոյր և յաջորդք նորա, նորին իսկ Խորենացւոյն վկացութեամբ, ոչ այլ ինչ էին եթէ ոչ Քաղդեացւոց և Պարսից կողմէն զրուած գործակալներ, վերտիկացուներ և մեծ կուսակալներ»: Այսպէս նոյն իսկ պ. Գարագաշեանի խօսքով երեւակայական մի բան է գառնում Տիգրանից առաջ հայ թագաւորների ազատուած լինելն օտար լծից: Եւ չգիտենք ուր մաս այդ «երեւելի հակասութիւնը»:

Բայց մենք անցնենք Մեծն Տիգրանին, որի պատմութեան մի յիշողութիւն է նորանից առաջ օտար լծի տակ լինելը և նորա օրով օտար լծից ազատուելը Հայկազանց թագաւորների պատմութեան մէջ:

Յայտնի է, Մեծն Տիգրանի նախորդներից Արտաշէս Ա..ի օրով (189 թ. Ք. ա.) են հայոց իշխանները թագաւոր անունն ստանում: Մեծ Հայքի թագաւորներն այնուհետեւ հետզետէ ընդարձակում են իրենց երեւելները: Սակայն Տիգրանից առաջ, «Փ վախճանել գարուն թ. ի յառաջադէմն խաղացք Մեծին Հայոց արգելաւ ի Պարթեաց», ուր առին զՄարտեակես և Մարտեակեանց անունը պատմութեան մէջ (Միհրդատան թ. 114—86) ետ պատմազմ՝ ընդ Հայս, յաղթեաց թագաւորի նոցա Արտակազայ (Յուսու. ԽԲ. 2. 16), եւ էտ պա-

տանդ զԾիգրան, իշխան թագաւորազն (Յուսու. ԽԲ. 3. Սար. ԺԱ. 14, 15):.... Յետ մահու Արտաւազայ Միհրդատ չէառ յանձն տալ Տիգրանայ զազատութիւն եւ զաթոռ նարցն իւրոց՝ բայց տալով նմա թողուլ դաշամբ 70 զաւառ կամ «հովիսո» ի Հայոց (95 ն. Ք. ՔԲ.):.... «Հայն խոնարհեալ, այլ ոչ նուածեալ» (Սար. ԺԶ. 1. 19) վկայէ յայտնապէս, թէ Պարթեաք ոչ նուածեցին երբէք զկայաց:

Եւ ահա իսկոյն տեսարանը փոխուում է: Այդ վասնապհեալ և պատմանդ տուող ազգը բարձրանում է: Խորա թագաւորով Մեծն Տիգրան, որ ազատութիւն գտնելու համար իւր երեւելից եօթանասուն «հովիս» է տալիս Պարթեաց թագաւորին, մտածում է վանդրել զգիւժ իւրոց նախնի թշնամանաց: Դունդ մի հայացի եմնւաց յերկիր իշխանութեանն Պարթեաց և լինել միջամտելի մինչեւ յԱրբեղա և նինուէ, աւերել, գերփել զերկիրն ընդ որ անցանէր Պարթեաց ստիպեցան կոել դաշինս ի միաս իւրեանց, զարձուցանել ի Հայս զեւթանասուն հովիսան, զորս հանեալ էր նոցա ի նոցանէ յամին 95, նաև տալ նոցա զերկուին զաւառն ծաղկեալս հիւսիսային Միհրագետաց, այն է զՄիգգոնիա և Ուռհայատան (Սար. ԺԱ. 14, 15): Հանելիք այսու հարկ եղեւ նոցա կոել դաշն նիզակակցութեան ընդ յաղթովին (Յուսու. ԽԲ. 1) եւ թողուլ կամաց նորա զիւրեանց հին ձեռակերտս (աւատ) ի հիւսիսոյ արեւմտից»:— «Տիգրան էր յայնժամ (72 թ. Ք. ա.) Հզօրագոյնն ի թագաւորս յառաջակողմանն Ասիայ: Տէրութիւն նորա ձգէր յափանց անտի Կուր գետոյ մինչեւ յեղելս Յորդանանու և ի լեռանց աշխարհին Մարտ մինչեւ ի ստորոտս Տաւրոսի, այլ շինուած յօտարսոտի մասանց, կազմեալ յամս 25, իրրե կոյտ իմն բեկորոց իւրելոց ի զբացի ազգաց... ի Հարաւոյ կողուպուաք» Սելեկեանց... իսկ առ սահմանոքն Պարթեաց՝ շար իմն մանր մանր թագաւորութեանց, որոց էին բնակ թագաւորք կամ տոհմային իշխանք, այլ ի սերտ հպատակութեան... Յարեւելից և ի հիւսիսոյ այլ ձեռակերտք (ՔԸ) գաշնաւոր անուամբ որոց պարտէր զօր ի թիկունս թագաւորին, որ կոչէր զանձն Արքայից արքայ»:

Միթէ կարող էր ազգի քաղաքական կեանքի մէջ կատարուած այս մէծ և յան-կարծական յեղափօխութիւնը չժողնել ժո-ղովրդի երեակայութեան վրայ ոչ մի ազգեցութիւն։ Եւ որքան գեղեցիկ համառօտում է Խորենացին, գուցէ տեղ տեղ և երգի խօսքերով։ «Արանց կացեալ զլուխ, և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց, և զընդ կացեալս՝ լծագիրս և հարկապահանջս կացոյց բազմաց»։

Յ. «Խորենացին որ զծիգրան կամեր ցու-ցանել իրեւ զմին ի մեծամեծ աշխարհակալաց Ասիոյ . . . կանխելով՝ կուտայ նմա կարգել և յարգարել իւր զինուորական զօրութիւն և անազին ըանհակ մը կազմել . . . Դժուարին է սակայն հաւատալ, թէ ժողովուրդ մը որ յետ նկծեալ մնալոյ գարերով զրեթէ առանց զինուց և զինուորութեան ընդ օտար լծով, այն ինչ սկսած էր սրով նիզակաւ և աղե-զամբ վառեալ հետեւակ և հեծեալ ունենալ և ի մօտոյ ճակատ յարգարելով կառել սոր-միլ՝ յանկարծ այնպէս զօրացաւ մինչեւ տիրել Փոքրուն Ասիոյ, զՅոյնս հնազանդեցնել և չնչել Մարաց թագաւորութեան պէս աշխարհակալ աէրութիւն մը ի հզօրագոյն ժամա-նակի նորա»։

Նկատենք նախու որ «կանխելով» բառն աւելորդ է, Խորենացին ոչ մի տեղ չէ ասած թէ ծիգրանը նախ զօրքը կարգաւորեց և ապա շրջակայ երկիրներին տիրեց։ Այդ ասողը ինքը պ. Գարագաշեանն է, Խորենացին ծիգ-րանի յաղթութիւններն ու նորա հարսու-թիւնը նկարագրելուց յետոյ միայն անցնում է զօրքի նկարագրին։ «Հետեւակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առհասարակ զիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէղ նիզակի վառեալք, մերկըն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածած-կեալք։ Ուսոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայցն պահպա-նակաց և զինուց փայլմունք և շողիւնք, զթշնամիսն արտահալածելու»։

Այժմ տեսնենք թէ ինչպէս է նկարա-գրում պատմութիւնը Մեծն ծիգրանի առ-հազին բանակը։ «Նախարարք և սեպուհը էին շունչ ի ոգի, յօրոց կազմեր հեծե-

լազօրն կուռ վառեալ ինքն և երիվարք նորա յլլուանից անտի էին զրահաւորքն պատե-նազէնք, իսկ Վիրք, գրացիք նոցա՝ աղեղնա-ւորք կորովիք։ Թագաւորին Մարաց Ատրպա-տականի, փեսայ ծիգրանայ՝ մարթէր գու-մարել հետեւակս 40.000 և հեծեալս բիւր (Ստր. ԺԱ. 13. 2)։ Մարք ապյին աղեղնա-ւորս հեծեալս։ Արաբացիք զայլութիւնն անա-պատի, Կորդուացիք ռահմիլայք էին և շի-նողք կամրջաց, վարձկան՝ զելլէնք և ոյլ և աղի ազգի գունդ զօրաց, ընդ ամենայն, ասեն, իբրեւ 500.000 այր»։

Յանկարծական փոփոխութիւն չէ այս՝ հայ բանակի և այն ել ինչ փոփոխութիւն։ Եւ միթէ Խորենացին աւելին է ասում։ Աւելացրէք վրան և փարթամացած ու ծո-խացած թագաւորի և նախարարների զէնք ու զրահների շքեղութիւնն ու փայլքը։

4. Նախորդ հատուածի մէջ տեսանք, որ պ. Գարագուշեանը Մարաց տէրութիւնը նուածելն ևս անտեղութիւն է համարում։ Տեսնենք ինչ է ասում մեր պատմութիւնը Մեծն ծիգրանի համար։

«Որ աւելի կարեւորն էր՝ Բղեաշն Մեծին Մարաց (Դարեհի, որպէս հաւանութեան է, ըստ Ապահանու, Միհրդ. 106) ետես զայս եկեալ հասեալ մինչեւ ի դորս նկատանայ, որք եւ այրեցին զապարանս նորա (Խորդոր Քարակացի Դ. 6)։ Այսպէս ամենայն արուար-ձանք բռնագատեցան ընդունել զվերին իշխա-նութիւն նորա ծանր ծանր պայմանօք, էր որ աւելի, էր որ պակաս։ Թագաւորք Ազուանից և Վրաց առ կուր գետով, թագաւորք Մա-րաց Ատրպատականի — (Միհրդատ արքայ Ատրպատականի արար կին զմին ի գսաերաց Տիգրանայ, Դիմն. Կաս. ԼԶ. 16) — եւ Մեծին Մարաց, որպէս և թագաւորք կորդուաց և Ազիաբենայ զվերին Դկղագաւ՝ եղեն հարկա-տուք ի ժամանակի խաղաղութեան, և ձեռն-առ զօրօք և սատարօք ի պատերազմունաս։

Ուրիշն ուր մեաց Մարաց նուածելու անտեղութիւնը։ Ինչ որ ծիծաղելի կայ Խո-րենացու պատմութեան մէջ՝ ոչ թէ Մարաց տէրութիւնը նուածելն է, այլ այն, որ մեր ծերունի պատմագիրը թերեւ իւր աղբիւրից խարուած, Տիգրանին դնում է իբրեւ ժա-

մանակակից եւ զաշնակից Կիւրոսի: Այսպէս զնելուց յետոյ նա Տիգրանին Մարաց տէրութիւնը կերացնել է տալի Կիւրոսի աջակցութեամբ: «Որ և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւն» (Ա. իդ.): «Ժանդակի կամօք և յօժարութեամբ զիւրոս ունելով, զիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց» (Ա. լա): Անշուշտ անտեղութիւն է տաել, որ Կիւրոսն իւր յօժար կամքով օգնել է Տիգրանին՝ յափշտակելու Պարսից տէրութիւնը, որ իրեն Կիւրոսինն էր<sup>4</sup>: Սակայն այդ անտեղութեան վրայ ոչ մի բան կարելի չէ հիմնել այն պատճառով, որ Տիգրանի թուականն և Պարսից Կիւրոսի անունն ու նորա աջակցութիւնը ոչ թէ երգինն են, այլ երգը մշտկողինք եթէ Կիւրոսն և իւր աջակցութիւնը դուրս ձգենք, — և անպատճառ պէտք է դուրս ձգել՝ — այն ժամանակ կը մնայ, որ Տիգրանը յափշտակել է Մարաց և Պարսից տէրութիւնը: Այս գէպքում Պարսից բառը փոխանակած Պարթենաց բառին ժողովրդի յիշողութեան մէջ ևս Մեծն Տիգրանի կռիւների մէջ հին Պարթեների տեղ նոցա փոխանակած նորագոյն (Սասանեան) Պարսիկները կարող են անցած լինել: Պարսիկ անունը հայոց դրացի արիստան ազգերի համար միշտ աւելի ժողովրդական եղած կարող է լինել հայոց մէջ, քան Պարթե անունը:

Այս անհեթեթութիւնն, այսպէս, եթէ մի բան առացուցանում է, այն է, որ երգը մշակողը, Տիգրանին Կիւրոսի ժամանակակից դնելով և Կիւրոսին Տիգրանին յօժարու-

1. Դժուար է կարծել որ խելք զիփին մի մարդ այդպիսի բան գրեր: Ուսի եւ շատ հաւանօրեն Պարսից բառը երկ Պարթենաց բառին յէ փոխանակած, պէտք և համարել եկամուտ մի բան, որոց Ասուածաշնչի ազդեցուրեան տակ մաս գրչագիրների մէջ՝ Կրտակները հետորեկամբ կարող են: Ասուածաշնչի մէջ Մասին կրկնուած «Մարաց և Պարսից» մէրին վարժուած մնելով, Պարսից բառն աւելացնել: Այս հաւանակամ է բուռն մոզ, մանաւանդ որ առաջին անցամ մոյն միտք նորենացին դրել և տունց «Պարսից» բառի: Թավաս Արծրունու մէջ (եր. 38) բկակ եւ պատերազմի մէջ Տիգրանն է Աժդակակին սպանում, բայց «Կիւրոսի զիւտ գորում» ոչ սակաւ սատարունս առներ, մինչեւ միահոդյան զօրում Աժդակակայ վատնաւ սուսերաւ՝ տիր (Կիւրոս) Մարաց և Պարսից»:

թեամբ օգնել տալով հանգերձ, թռղել է երգի մի զիծը թէ Տիգրան (Մեծն) Պարսից (Պար-թեաց) տէրութիւնը յափշտակել է և ստիպել նոցա «կոել դաշն նիզակակցութեան», Հայոց հետ: Այս այսպէս արգէն պատմական զիծ է: Այնուհետև արգէն աւելորդ աշխատանքն է ցոյց տալ, ինչպէս անում է պ. Գարագաշեան, որ Կիւրոսի ժամանակակից Տիգրանը չէր կարող պիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակելու, և այն կամօք և յօժարութեամբ օժանդակ ունենալով Կիւրոսին:

5. Անտեղութիւն է զանում և այն բանի մէջ, որ Տիգրանը շինել է Տիգրանակերտ քաղաքը, Պ. Գարագաշեանն աշխատում է ցոյց տալ, որ Կիւրոսի ժամանակակից Տիգրանը չէր կարող շինել այդ քաղաքը, որ Մեծն Տիգրանի շինածն է Ա. գարում Ք. ա: Աւելորդ աշխատանք: Ժողովրդական երգով Տիգրանակերտի շինողը Տիգրան թագաւորն է միայն, իսկ թէ Խորենացին, կամ իւր ազգիւրը, ժողովրդի երգած Տիգրանին, որ Մեծն Տիգրանն է, արել են Կիւրոսի ժամանակակից այդ նոցա սխալն է:

Սոյնարիսի աւելորդ աշխատանք է Տիգրանակերտի տեղն այստեղ ու այնաեղ որոշնելը, թէ արգեհօք Փայտակարանի Տիգրանակերտն է: թէ արգեհօք Զոկաստանի Ցանակերտն է: Խորենացին երկրորդ անգամ էլ յիշում է (Պ. լը.) միեւնոյն Տիգրանակերտը, որի որմանքն էին «ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ», և այս Տիգրանակերտը նա Միջագետքում գիտէ: Ուրեմն հայկազն Տիգրանի շինած Տիգրանակերտասկուով՝ նա հասկանում է Մեծն Տիգրանի Միջագետքում շինած քաղաքը: Ուստի և նորա պատմութեան բուն ազգիւրը, երգը, շատ լաւ պահել է Տիգրանակերտի շինութեան յիշտակին ևս: Աւելորդ չի լինիլ այստեղ բերենք այդ քաղաքի նկարագրից մի երկու զիծ: «Տիգրանակերտի թուէին արգարե յարուցեալ քաղաքը մեծամեծք հնոյն Ասորեստանի և Բարելացւոց հանգերձ պարսպօքն յազիւսոյ յիսուն կանգնոյ բարձրու-

թեամբ, լայնք մինչեւ քաւական լինել շինութեան ապաստանաց, հանգերձ ամսուր միջնարերգաւն, հոյակապ ապարանիւքն և արտաքոյ պարսպաց... . . . Եւ իդուր չեւ, որ Խորենացին Ծիգրանակերտի պարիսպների համար զրում է. «ի Հայկազնոյն Ծիգրանայ հոծեալ և յարմարեալ որունկը»:

Այս հինգ հէտերն են պ. Գարագաշեանի մէջ բերած «անտեղութիւնները», որոնք բոլորը, ինչպէս ընթերցողը կը տեսնէ, վիրանում են, երբ Ծիգրան անուան տակ Մեծն Ծիգրան ենք հասկանում: Մենք թողնում ենք պ. Գարագաշեանի քննադատութիւնը (Ա. կր. 190. Հատուած 42) թէ ինչպէս «անհաւատալիք» է Աժգահակի խնամութեան և Ծիգրանին դաւելու «անհամ առասպելը»: Այդ քննադատութիւնը բնաւ արժէք չունի, քանի որ նա այդ առասպելն իրբեւ առասպել չէ քննում, և Խորենացու բնագիրն աղջառում էլ է: Նա այսպիսի առարկութիւններ է անում. «Բայց միթէ այնչափ անմի՞՛ էր (Աժգահակ), մինչեւ զիւր նենգաւոր խորհուրդ յայունել համօրէն ժաղովոյ նախարարաց»: Նախ և առաջ պ. Գարագաշեանը նեղութիւն չէ կրում Խորենացին նայելու: Այնտեղ այդպիսի բան չկայ: Աժգահակը իւր երազը միոյն իւր Խորհրդակիցներին է պատմում: Հինգ անգամ խորհրդակիցը են միշուած և չէ անգամ ըարեկամք. և ոչ մի անգամ «համօրէն ժողով նախարարաց»: Եւ եթէ պ. Գարագաշեանը իրբեւ առասպել քննէր, անշուշտ, կը տեսնէր, որ թագաւորներն շատ յաճախ նոյն իսկ իրենց նախարարների «համօրէն ժողովի» հետ այդպիսի խորհրդ են անում: Պ. Գարագաշեանի կարծիքով «յիմար» է Աժգահակ, «զի զայն սոսկալի գաւաճանութիւն կը խորհի կտարել ի ձեռն Ծիգրանուհոյ»: «անտեղութիւն» է, որ Աժգահակը Ծիգրանին երկու տերութիւնների սահմանազումն է հրաւիրում տեսակցութեան, և նմանները:

Բայց մենք թողնենք այդ անարժէք խօսքերը և շարունակինք համեմատել Խորենացու հայկազն Ծիգրանի պատմութիւնը Մեծն Ծիգրանի պատմութեան հետ:

6. Մեծն Ծիգրանի պատմութեան մէջ

կարգում ենք. «Երկոքին թագաւորքն (Տիգրան և Միհրդատ) եղին պայմաննս, զի յամենայն մարտս պատերազմաց զորս տայցեն երկուստեր ծախիւք՝ երկիրն նուածեալ յետյալթութեանն լիցի Միհրդատայ, իսկ աւարն այն է զերիք, անասունք և զանձը՝ Ծիգրանայ» (Յուստ. ԼՀ. 3. 5): Եւ այդ աւարն ու զերին, որ Ծիգրանն առնում է կապագովիհայից, սակաւ բան չէ: Եւ չենք խօսում միւս երկիրներից առած աւարների ու հարկատու ազգերից ստացած զանձերի մասին: «Ի պահպանութիւն այսպիսի և այսափ զօրաց պիտոյ էր թագաւորին ամբաւ զանձ: և Ծիգրան իրբեւ զՄիհրդատ ունէր քաղաքս մեծամեծս լի զանձուք, որպիսի էին Ողականն և Բողբերգ ոչ հեռի Ալրտաշատէ, և Արտագերք առ Եփրատաւ» (Արածանի: Սար. ԺԱ. 14. 6): Լսենք և արքունիքի նկարագիրը: «Ալքունիքն՝ ունայն շքով և պերծութեամբ արկանէր ահ ժողովրդեան որ տղայն էր Թագաւորն մեծապատիւ մեծարեալ մինչեւ կոչի աստուած, ոչ երեւէր երեւէր ի հրապարակի՝ եթէ ոչ մեծաշուք սպասու, զգեցեալ պատմուծան նկարէն, զաւ աղան, ի սպիտակէ և ի կարմրոյ (Դիսն Կաս. ԼԶ. 52), և վերաբկու ի ծիրանոյ խորշխորշան: զլուխն պատկեալ ըարձր աստեղազարդ խորի: Յորժամ գային առ նա յայգորի՝ թագաւորք չորք ժեռատունկը կային յոտին, ձեռօք կցելովք առ գահոյիւ նորա, և ի հեծանիւ նորա ի ձի՝ ընթանային նոքա առաջոյ նորա հետափ լոկով պատմուծանաւ: Փարթամացած հայ իշխաններն ես անշուշտ պիտի հետեւին իրենց թագաւորի օրինակին:

Այժմ տեսնենք թէ ինչպէս այս պատմութիւնն անում է Խորենացին իւր սեղմոնով: Նա ասելով որ Ծիգրանը մեր ազգը բարձրացրեց և մեզ չծաղիրս և հարկապահնջս կացոյց բազմաց, աւելացնում է. «Մթերս ոսկոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս պէս գունոց և անդուածոց արանց հասակաց և կանաց միանգամայն բազմացոյց, որով տգելագոյնքն իրբեւ զգեղաւորս երեւէին սքանչելիք, և զեղաւորիքն ըստ ժամանակին առհասարակիւցանացեալք»:

7. «Թաղաղութեան և շինութեան բերող իւղով և մեղու զհասակս ամենեցուն պարարեալ», դրում է, Խորենացին Տիգրանի համար:

Եւ արդարեւ, Մեծն Տիգրանի ձեռով նուածուած Ասորիքի համար ասում է, պատմութիւնը. «Ողի առ Ասորւոց աշխարհն զամն չորեքտասան (Ապահան. 17.) թէպէտ ընդ օտար իշխանաւ վայելեցին խաղաղութիւն, հանգիստ և աւուրս բարենշանս: Եթէ օտար աշխարհն այսպէս բարգաւածում էր նորա օրով, որչափ ևս աւելի ուսն երկիրը նուածուած ազգերի աւարով լիացած ու փարթամացած՝ անշուշտ հանգիստ էր վայելում հայստան, որի շինութեան համար Տիգրանը հրեանէր և յոյներ էր գաղթեցնում: Եւ որքան գեղեցիկ ու բուն վիպական ձեռով է արտայայտուած այդ շինութիւնն ու լիութիւնը. «Իւղով և մեղու զհասակս ամենեցուն պարարեր»: որ տնշուշտ ժաղովրդական երգի խօսքերն են: Իւղ ու մեղրը մինչեւ այժմ մեր ժողովրդի մէջ վիպական սիրելի կերակուրն է. Դաւիթին իւր հայրենի իւղ ու մեղրով է սնւում, և ժողովուրդն իւր երգի մէջ մէկին լաւ խնամելու համար ցարդ երգում է. «Քեզ կուտացնեմ մեղր ու կարագ»<sup>1</sup>:

8. Մեծն Տիգրանին է վերաբերում, ինչպէս տեսանք, և Մարաց նուածումը: Բայց Խորենացու մէջ միայն այդ յիշողութիւնը չէ պահչուած: «Սա նախ յառաջազոյն գաշնաւոր եղեալ Աժգահակայ, որ ի Մարաց էր, տայ նմա զքոյր իւր Տիգրանունի կնութեան, ըզձիւք խնդրելով Աժգահակայ: Այս խնամութիւնն ևս պատմական յիշողութիւն է: Արդէն աեսանք, որ Մեծն Տիգրանի փեսան էր Ատրպատականի Մարաց թագաւորը, որ աւրար կին զմին ի գստերաց Տիգրանայ» (Դիոն Կաս. (Զ. 16)): Միայն հայոց առասպելի մէջ Տիգրանունին, որ սովորաբար նշանակում է Տիգրանի դռւսար (Մեծն Տիգրանի հայրն էլ, հաւանօրէն Տիգրան անունն է կրել), Տիգ-

րանի քոյրն է: Այսքան տարրերութիւն, հարկաւ, կարող է մտնել ժողովրդական երգի մէջ:

9. Քննենք առասպելի Մարաց թագաւորի յարաբերութիւնը Տիգրանի հետ: Աժգահակայ յառաջազոյն գաշնաւոր է Տիգրանին. փեսայանում է և ապա նորան շար նիւթել է ուղում: Բայց յաղթեւում և սպանուում է Տիգրանից: Այսպէս և Մեծն Տիգրանի փեսան՝ Մարաց թագաւորը դաշնակից է հայոց թագաւորին և յիշում է նորա պատերազմների մէջ: Մենք չիտենք թէ այդ փեսան ինչպէս է փորւում: Երբ Տիգրանի ասալը թեքուում է: Բայց շատ շուտով Տիգրանի անմիջական յաջորդների Արտաւազի և Արտաշէսի ժամանակ արդէն տեսնում ենք Մարք թշնամացած են հայոց հետ Արտաշէս թագաւորը նոյն իսկ կարի է ունենում Մարաց հետ և Պարթեաց օգնութեամբ յաղթեւում է նոցա:

Դիտենք, պատմական իրողութիւնները ժողովրդի յիշողութեան մէջ երբեմն կցւում ու միանում են իրար և մի քանի մօակի ժամանակներում իրար յաջորդող թագաւորների պատմութիւնից կազմում է մի պատմութիւն: Արդ, տեսնում ենք պատմութեան Տիգրան թագաւորը Մեծ Մարաց մայրաքաղաքն առնում աւելում է և նոցաթագաւորին ստիպում ճանաչել իւր իշխանութիւնը Փոքր Մարք նախ դաշնակից են հայոց նոցա թագաւորը հայոց թագաւորի փեսան է: Ապա շուտով թշնամանում են այս երկու ազգերը հայր և մարք: Մարաց թագաւորը հայոց թագաւորին վեասել է ուղում և հայոց թագաւորը յաղթեւում է նորան: Եւ այս ամենը հեշտութեամբ կարող է պատմուել մի հայոց թագաւորի՝ Տիգրանի և մի Մարաց թագաւորի՝ Աժգահակի վրայ: Եւ պատմուած էլ է:

Այսպէս Տիգրանի և Մարաց թագաւորի յարաբերութիւնն ամրողապէս Մեծն Տիգրանի և նորա անմիջական յաջորդների՝ Մարաց հետ ունեցած յարաբերութեան

1. Պ. Խալաբեկը իւր սովորական ձեռով այս փուղ ու մեղրն էլ Ասուածաշնչից է հանում: Զի՞ որ այնեղ էլ, Խալաբեկը, է. 15. 22 գործածած կայ քրոջ ու մեղր կերիցք խօսք:

պատմութեան մի ժողովրդական յիշողութիւն է միայն:

10. Մեծն Տիգրանի մակդիրն անդամ մեծն պահուած է, Խորենացու մէջ երգից առած այս Տիգրանի վրայ. «Արդ յառաջ քան զձեռնարկելն մեր ի բանս որ յաղագս Մեծին Տիգրանայ», (Ա. իգ). մինչդեռ Պոմպէոսի ժամանակակից և հռոմայեցոց հետ կռուող Տիգրանին որ խստապէս Մեծն Տիգրանն է, Խորենացին միւս Տիգրաններից որոշելու համար «միջին է կոչում»: Ժողովրդական երգն ուրեմն ծշտութեամբ պահել է իւր գոված թագաւորի մակդիրը՝ Մեծն:

Մենք յետոյ ուրիշ զծեր էլ կը տեսնենք, որ Խորենացու մէջ Երուանդեան Տիգրանի վրայ են ասուած, բայց խստապէս Մեծն Տիգրանին են վերաբերում: Այստեղ այսքանով բաւականանք: Այս բերած կետերն արդէն լիուլի ցոյց են ատլի: որ Երգից առած Տիգրանի պատմութիւնն ամբողջապէս Մեծն Տիգրանինն է: Հարկաւոր է միայն գուրս ձեւ ի՞ր դիմումութիւնը աջակցեալ, ի՞ր զլիսից «Դաշնաւորութիւն մասրմութեան» որ ի Կիւրոսէ առ Տիգրան, կապ սիրոյ պարսկայնոյն և Հայկացինն», և ԱԱ. գլխից «Օժանդակ կամօք և յօժարութեամբ զիւրոս ունելով» խօսքերը: որոնց բոլորի իմաստն էլ նոյն է՝ Կիւրոսի բարեկամութիւնն ու օժանդակութիւնը:

«Մեծին Տիգրանայ» երգից առած այս պատմութիւնն, ըստ ինքեան հասկանալի է, պէտք է հանել այն տեղից, ուր կայ Խորենացու պատմութեան մէջ, և գնել իւր խսկական տեղում: Երգն ու գովեստը Պոմպէոսի ժամանակակից Մեծն Տիգրանի: ըստ Խորենացու՝ միջին Տիգրանի վրայ է եղել, նորա վրայ էլ պէտք է պատմել այսուհետեւ: Եւ այսպիսով Խորենացու պատմութիւնը, որ յաղագս Մեծին Տիգրանայ, որ . . . էր հումկու, անուանի և յաղթողս ընդ այլ աշխարհակալս, սահնում է իւր խսկական պատմական արդէքը, և միանգամայն այդ պատմութիւնը գառնում է Խորենացու Հայոց պատմութեան կարեւոր մասերից մէկը: Երգը մեծ ծշտութեամբ պահել է Մեծն Տիգրանի պատմութիւնը: Դժբախտաբար, Խորենացին,

թերեւ հետեւելով իւր աղբէւրին, սխալուել է իւր ժամանակազրութեան մէջ: Մենք այդ սխալի պատճառները ներքեսում կըտեսնենք: Այստեղ աւելորդ չի մնիլ որ մի երկու խօսքով տեսնենք թէ ինչպէս է նկարագրում երգը Մեծն Տիգրանին:

Մեծն Տիգրանի նկարագիրը ժողովրդական երգերի մէջ: — Մենք տեսանք, Խորենացին անմիջապէս երգերից չէ առնում Տիգրանի պատմութիւնը, այլ մի զրաւոր աղբիւրից: որ կոչում է «Հիւսումն Պիտոյից», «իշորս հագներգութիւնս»: Այս ի նկատի ունենալով, արդեօք կարելի՞ է ընդունել որ Տիգրանի արտաքինի և ներքինի նկարագրութիւնը ժողովրդական լինի կամ ժողովրդական տարերը ունենայ իւր մէջ: Անշուշտ:

Մեր միջեւ այժմ արած ուսումնասիրութեան մէջ տեսանք, որ Տիգրանի պատմութիւնը շինծու չէ: այլ ամբողջապէս պատմական է և վերցրած ժողովրդական երգերից: Խոչքան էլ այդ պատմութեան առաջին գըրողը, արգասաւորն ի բանս, այդ պատմութիւնը «Պիտոյից» կանոններով մշակած լինի, — ինչպէս որ է իրօք, նորա պատմութիւնը երեւակայական ու հկամամտածական չէ: Այսպէս և ինչքան էլ նա Տիգրանի մարմնի գեղեցկութիւնը, զօրութիւնն ու արագութիւնը, գովեր, ինչպէս պահանջում էր «ներբողեանի սահմանը», կարելի չէ ասել, որ այդ գովեստի գծերը, «կամամտածական» լինին և ոչ թէ մեծ մասամբ բուն աղբիւրից՝ ժողովրդական երգից առած: «Ենրբողեան է բան արտադրական եղելոյ ըարեաց», ասած է Պիտոյից գըրքի մէջ (եր. 413) ամենից առաջ, և ոչ թէ կամամտածական մի բան: Այսպէս և ետեւից զրուած «Մովսէսի ներբողեանի մէջ (417 հա. ժ. ժա. ժբ.)» այդ ներբողեանի հեղինակը զովում է Մովսէս մարգարէի մարմնի «գեղեցկութիւնը», զօրութիւնը և երագութիւնը, բայց նա այդ ամենն իրենից չէ շինում, այլ Աստուածաշնչից է վերցնում կամ Մովսէսի կեանքի այս կամ այն դիպուածից է հանում:

Բայց որքան դժողոյն է այդ ամենը, ոչ մի մակդիր, ոչ մի կենդանի նկարագիր, իսկ

ընդհակառակն, Տիգրանի գովիստը ո՞քան կենդանի է, վառ ու գունաւոր և մակդիրներով հարուսաւ լնչից է առաջանում այս երկու ներբողեանի միատեսակ գովիստի՝ մարմնի գեղեցիութեան և զօրութեան նկարագրի այս մեծ տարրերութիւնը։ Հարկաւ ոչ միայն այս ներբողեանների հեղինակների ճարտասանական շնորհքի տարրերութիւնից, այլ աւելի այն հանգամանքից, որ Տիգրանի գովիստն առնուած է ժողովրդական երգից։ Երգի մեջ արգելն պատրաստ գտել է ներբողեանի հեղինակն այդ իսկ հոմերական մակդիրներն ու նկարագիրները։ «Խարտեաշ» այս և աղերեկ ծայրիւ հերաց . . . երեսօք գունեան, անձնեայն և թիկնաւեան, առողջաբարձն և գեղեցկուան . . . կատարեալս ի զիւցազանց հասակաւ և բնութեամբ . . . սքանչելի զիւցազնւ արծուանման ոլացեալ թեօք, քաջահասակն, նիզակաւորն, ամենեին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցիութիւն աւարտեալ հասակի, առողջ ամենայնիւ ընդ իրեարս պատշաճեալ և ուժով ոչ զոք ունելով իւր զյու։ Հայկազն բազմարիւրաւոր։ «Բազմարիւրաւոր» Տիգրան, — մի մակդիրու որ միայն Մեծն Տիգրանին և նորա կես միլիոն զօրքին է վերաբերում։ Իսկ միւս մակդիրները արգեօք ագոնք ևս բուն պատմական են, այսինքն արգեօք երգը ծգութեամբ պահելի է Մեծն Տիգրանի նկարագիրը։ Անշուշտ կարելի չէ պահանջել որ Առաջին դարում Ք. ա. ապրող մի թագաւորի արաքինը ծգութեամբ պահած լինի այն ժողովրդական երգը, որ դարեր շարունակ բերնէ բերան անցնելով, ամենավազը Ե. գարում դրուած պիտի լինի։ Ժողովուրդը սիրում է իւր երգի մեջ իդէալական պատակերներ ստեղծել և պատմական անձերին անդամ իւր սիրած իդէալական կերպարանքը տարբայց և այնպէս անհնարին է, որ երգը չուրոշէ պատմական անձի արտաքինի և ներքինի այս կամ այն գիծը։ Ուրիշներին ենք թողնում ընդարձակօրէն համեմատելու երգի Տիգրանի և Մեծն Տիգրանի արտաքինը — եթէ վերջինս կայ նկարագրուած ուր և է։ Մենք կըրազդատենք մեզյայնի մի երկու գիծ։ Մեծն Տիգրան նկարագրուում է, «Անհնա-

րին փառասէր և ժիր, եօթանասնեմննի չէր կորուսեալ զիւր կայտառութիւն . . . Մարմինն էր զօրեղ։ Միթէ այս կարճ նկարագիրը նոյն իսկ ամբողջապէս չէ բովանդակում իւր մեջ երգի Տիգրանի նկարագիրը։ Ի՞նչ են անձնեայց թիկնաւեան, առողջաբարձն, կատարեալ հասակաւ կամ քաջահասակի, և ուժով նմանը չունեցող բառերը, եթէ ոչ այս «զօրեղ մարմնի» զարգացումը։ Եւ մի մարդ որ եօթանասուն տարեկան չէ կորցնում իւր կայտառութիւնը, միթէ երգը ծամարիտ չէ նկարագրում, կոչելով նորան «երեսօք զունեան» առողջ ամենայնիւ։

Ինչ որ Տիգրանի արտաքինի համար ասացինք, նոյնը պէտք է ընդունել և անձնական յատկութիւնների համար։ «Զանձն յիմաստութիւն և յողջախոհութիւնն» ասած է «Ներբողեանի սահմանի» մեջ։ Ինչքան էլ Տիգրանի պատմութիւնը զրողը Պիտոյից պահանջած այդ չորս յատկութիւնները զնում է Տիգրանի համար, կարելի չէ ասել թէ անհիմն ու մտացածին բան է գրել նաև «Արանց կացեալ զուիս, և արութիւն ցուցեալ զազդս մեր բարձրացոյց, այսպէս է գովուած Տիգրանը, որ և «արանցն այնոցիկ և ամեննեցուն քաջ»։ Եւ արդարեւ «անհնարին միր», եռանդուն և արի է նկարագրում Մեծն Տիգրանը։ մի մարդ, որ մօտ 45 տարեկան հասակում թագաւորում է, քսան և հինգ տարի շարունակ քաջութեան և աշխարհակալութեան գործերով զբաղւում, մօտ եօթանասուն երկու տարեկան հասակում (69—68 թ., Ք. ա.) կարում անցնում է գոամենայն աշխարհական զայոց կոչել զերիտասարդս ի զէն վասն հայրենի աշխարհին։ զրում է զբովանդակ աշխարհին, ի զինուորութիւն, կալեալ զուժեղագոյնսն միայն ընդ զրօշու։ բաժանում է այդ զօրքը վաշտերի ու գնդերի և կրթում է կարճ ժամանակում, որչափ հնար և, ըստ հոռոմոց օրինի, որպէս զի կարողանայ հոռվամայեցի լեզէնների գէմ կռուել Ահա՛ «արութիւն ցոյց տուող թագաւորը»։

Տիգրանի նելքին յատկութիւնները սովորաբ շատ բարձր չեն համարում։ Բայց պէտք չէ մոռանալ, որ օտարներն են նկարագրած նորան և նկարագրած են իւր մեծ

դաշնակցի՝ Միհրդատի հետ համեմատելով՝ «Թէպէտ չկարէր նա գա, ի կշխ համեմատութեան ընդ դրացւոյն իւրում» (Միհրդատայ) ոչ հանձարով և ոչ բուսով բարուցն՝ ունէր ընդ նմա զօյդ հաւասար եռանդն մեծանալոր: Խնչքան էլ Ծիգրանը բախտաւոր ասաղի տակ ծնուած լինէր և քաղաքական հանգամանքները նպաստաւոր լինէին նորան, միթէ կարելի՞ է կարծել որ նա առանց ներքին մեծ արժանաւորութեան, առանց «փոշեմագոյն» և «մեծիմաստն» լինելու կարող էր այնքան մեծ յաջողութիւն ունենալ: Այն ժամանակ, արդարեւ, նա պէտք է «ողի իմն» լինէր, ինչպէս հաւատում էին ժամանակակիցները, մի հաւատ, որի յիշողութիւնը նոյնպէս մեացել է երգի մէջ: Նա կուռում է «կատարեալ դիւցազն» հասակաւ և ընութեամբ, «քանչելի դիւցազն» (Ա. իդ. Հմտ. Ա. լա. «բայց ըստ դիւցազնութեան կարծեաց ... մի է և միայնակ հայկազնց» Ծիգրան Ա. իդ. «Գեղաւորքն ... դիւցազնացեալք»): Ծիշդ է հռոմայեցոց հետ ունեցած յարաբերաբերութեան մէջ երեսում է նորա անդուշութիւնը, բայց պէտք չէ մոռանալ, որ ինչպէս ծիշդ դասում է Ուկինաք: «Քսան և հինգ ամք ... անխառն յաջողութեան ետուն նմա սխակալել ... Սուտակասպասք հաւատացին թէ ողի իմն իցէ և ինքն յասազ իւր յուսացեալ էրու թողնում ենք այդ «պերճարան» թագաւորի հովանաւորութիւնը յունական գպրութեան և ճարտասանութեան, թողնում ենք և այն, որ իւր երկիրը ծաղկեցնելու համար՝ յոյն և հրեայ գերիներ և բերում չայսատան:

Դալով նորա արդարադատութեանը շափաւորութեանն ու ուղղախոհութեանը՝ գուցե, տրամադիր լինէինք կարծելու, որ այդ հատուածը ճարտասանական ծաղում ունին: Սակայն Խորենացին հենց այդտեղ յիշում է հին ժողովրդական երգերն ու դովեստներն իրեւ ազրիւր: Խորենացուն չհաւատալու ոչ մի տեղիք չունինք: Մնում է, ուրեմն, Ծիգրանի գովեստը՝ «պարկեշան ի կերակուրս և յըմպելիս: և ի խրախճանութիւնս օրինաւոր ... և ի ցանկութիւնս մարմնոյն շափաւոր» համարել ժողովրդի իդէալացումն, քանի

որ Մեծն Ցիգրանի համար ասում են, էր «մէտ ի հեշտանս» և արեւելիան սովորութեամբ բազմաթիւ կանայք ուներ: Այդպիսի մի զաղափարական նկարագիր է անշուշտ այն հաւասար արդարագատութիւնը, որ հայ ժողովուրդը ցանկացել է, որ իւր սիրելի թագաւորն ունենայ: «Արդարագատ և հաւասարակար կշխու ունելով յամենայնի, զամենայն ուրուք կենցաղ մատցն լծակաւ կը էր: Ոչ ընդ լաւադոյնսն խանգայր և ոչ զնուաստն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարեր զինամոյն՝ իւրոց ի վերայ արդարեկ զգիսասաւ»:

Նկատենք դարձեալ վերջին անդամ, որ այս ինչպէս և վերելի խօսքերը ինչքան էլ աղոնց բովանդակութիւնը երգից առնուած լինի, զուցէ սակաւ բացառութեամբ՝ բառացի երգինը չեն հարկաւ: Խորենացին միշտ իւր սիրած ճարտասանական լեզուով է պատմում կամ իւր ազրիւրի ճարտասանական ոճով ու լեզուով:

(Կըշարունակուի)

Մ. Աբեղեան.

## ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Կաղամբը փացնող միջամաներին ունցացմակար ամենահեշտ միջոցը: — Ըատ միջոցներ են գործ գրուած մինչև այժմ այդ վնասակար միջամաներին ոչնչացնելու համար, բայց մեծ մասամբ փորձերը անյաջող են անցել: Եթէմ պ. Շրէյներ - Յամլեդիլ տեսայ Գազետ- լրագրի Սեպտեմբերի 23-ի համարում գոյա վնասների առաջն առնելու ամենահեշտ միջոցն է սովորեցնում: Պէտք է կացնել մի Յ արշին երկարութիւն ունեցող կլոր ձողի վրայ մի արշին երկայնութեամբ քաթման, դրօշակի ձևով: Քաթմանի լայնութիւնը հիմքի մօտ պիտի լինի 9 վերշոկ: որ դէպի վերև հետզհետէ նեղանալով պիտի 6 վերշոկ դառնայ: Գործն սկսելուց առաջ քաթմանի երկու կողմից էլ պէտք է քսիլ թանձը և մածուցիկ մազիտ (տելեժիա սոլա), ձողի հակառակ կողմը մի քանի վերշոկ մաքուր թողնելով: որպէս զի թափահարելու ժամանակ կաղամբի ծայրերը չներկուին: Մազիալը քսելուց առաջ պէտք է աւելի մածուցիկ դարձնել կրակի վրայ պահելով: ապա քսելուց յետոյ պէտք է ման գալ արտի մէջ